

**Միջել Մոնտենի փիլիսոփայական ժառանգության հարցի շուրջ
(Ըստ Մ. Մոնտենի «Փորձերի» առաջին հատորի)**

Ռուդիկ Վարդանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-118>

Հանգուցային բառեր. վերածնունդ, Գերցեն, մշակույթի տեսություն, սկեպտիցիզմ, անտիկ փիլիսոփայություն, Հին աշխարհ, եվրոպակենտրոնություն, բարոյագիտություն

Նախաբան

Մ. Մոնտենը Վերածննդի ժամանակաշրջանի նշանավոր ներկայացուցիչներից է, ով ունեցել է ներգործուն դերակատարություն համաեվրոպական քաղաքակրթական մտքի զարգացման վրա: Նրան կարելի է համարել Վերածննդի դարաշրջանի «վերջին հումանիստ մտածողը և Նորագույն շրջանի առաջին բարոյագետը» [5, 18]: Մ. Մոնտենի փիլիսոփայական ժառանգության գնահատողները, մասնավորապես նրա «Փորձերի» մեջ բովանդակված մարդաբանական, բարոյագիտական, մանկավարժական հայացքները արժեևորողները նրան հույն իմաստասերներից ավելի բարձր են դասել, և տարբեր ժամանակահատվածներում նրա տպագրված գործերը «ձեռք են բերել հանրային հռչակ և բոլոր ազնիվ մարդկանց հավատուսույցի համբավ» [1, 84]:

Նա եղել է գիտության և իմաստասիրության կրքոտ ջատագով, քաղաքագիտական և սոցիալական մտայնությամբ՝ իսկական արիստոկրատ, ով երկու անգամ ընտրվել է Բորդոյի քաղաքագլուխ, սակայն երբեք չի հեռացել հոգևոր մշակույթի մտորումներից և անտիկ փիլիսոփայության հզոր ակունքներից:

Մ. Մոնտենի «Փորձերը» Վերածննդի դարաշրջանի արժանահավատ գործերից է, Գերցենի խոսքերով՝ «իրերի հանդեպ յուրահատուկ, գործնական, փիլիսոփայական, ոչ գիտական, հանրահայտ տեսությունից անկախ, ոչ մի վերացական ուսմունքի, ոչ մի հեղինակության չպատկանող ազատ հայացքը՝ հիմնված կյանքի, ինքնեկ մտքի և ապրած իրադարձությունների, գիտակցության, մասամբ հին մտածողների տեսական ուսումնասիրման վրա» [1, 5], նրանով հիացել են Վոլտերն ու Բալզակը, Պուշկինն ու Տոլստոյը:

Քաղաքակրթական արժեքների մեկնաբանությունը Մ. Մոնտենի գործերում

Մ. Մոնտենը հեղինակել է մի շարք աշխատություններ, սակայն քաղաքակրթական բովանդակության տեսանկյունից ամենահետաքրքիրը ուսումնասիրողները համարում են «Փորձերը»: Այդ աշխատությունները, որոնք գրվել են տարբեր տարիներին, իրենց ձևով ոչ գիտական, ոչ փիլիսոփայական, ոչ էլ գրական որևէ ժանրի մեջ չեն տեղավորվում, սակայն բովանդակության առումով և՛ գիտական, և՛ փիլիսոփայական, և՛ բարոյագիտական, և՛ մանկավարժական մտքերի հավաքածու են: Ժամանակակիցների ներկայացմամբ՝ Մոնտենը այդ աշխատությունները չէր ցանկանում հրատարակել, քանի որ դրանք նախատեսել էր բարեկամների նեղ շրջանակի համար: Սակայն շուտով «Փորձերը» հռչակվում է

ազգային նշանակության գործ, որ մեծագույն ազդեցություն է ունենում փիլիսոփայության, բարոյագիտության, մանկավարժության, քաղաքագիտական, ինչպես նաև քաղաքակրթական մտքի զարգացման վրա ոչ միայն Ֆրանսիայում, այլև եվրոպական մի շարք երկրներում:

Մ. Մոնտենի ավանդը քաղաքակրթական արժեհամակարգի տեսության մեջ անգնահատելի է. առաջ քաշելով գաղափարներ, որոնք ընկած էին հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների հիմքում, խստորեն քննադատում է եվրոպական քաղաքակրթությունը, որի սոցիալ-քաղաքական կառուցվածքը և հասարակական կյանքի բնույթը էպիստոմոլոգիայի տարբերվում է մայաների, ագտեկների, ինկերի ստեղծած քաղաքակրթական արժեքներից: Նոր աշխարհի հնաբնականների ստեղծած մշակույթը Մոնտենը տեսնում է նրանում, որ Ամերիկայի աբորիգենները ստեղծել են մշակութային արժեքներ՝ հիմք ընդունելով իրերի բնական օրենքները, որոնք թույլ են տալիս մարդկանց ապրել բնության հետ ներդաշնակության մեջ: Խոսելով Նոր աշխարհի հիմնական բնիկների մասին՝ Մոնտենը, ըստ էության, քննադատության սլաքն ուղղում է քաղաքակրթության ծագման ու զարգացման վերաբերյալ իրարամերժ տեսություններից մեկին՝ եվրոպակենտրոնությանը, որը աշխարհայացքային ու մշակութաբանական դիրքորոշում է, ըստ որի՝ համաշխարհային քաղաքակրթության ու մշակույթի կենտրոնը հանդիսանում է Եվրոպան: Չարյուրամյակներ եվրոպական մտածողության մեջ գերիշխում էր այն պատկերացումը, թե մյուս ժողովուրդները չեն հասել քաղաքակիրթ մակարդակի և գտնվում են զարգացման վաղ փուլերում: Եվրոպակենտրոն տեսությունը ելնում է այն ելակետից, որ բոլոր ժողովուրդները պետք է անցնեն եվրոպական քաղաքակրթության ճանապարհով և ձեռք բերեն միասնականություն: Մոնտենի մեծությունն այն է, որ իրենից առաջ որևէ մտածող չէր համարձակվել կասկածի տակ դնել այդ տեսության սնանկությունը: Մակայն Մոնտենի նվաճումը փիլիսոփայական, մշակութաբանական և քաղաքակրթական գաղափարաբանության մեջ չի սահմանափակվում միայն վերոնշյալ քննադատությամբ: Նա խարխիւեց նաև գոյություն ունեցող մարդաբանության տեսությունների հիմքերը, իսկ նրա կողմից առաջ քաշված մտքերը հետագայում զարգացրին Լուսավորության դարաշրջանի նշանավոր մտածողները՝ Վոլտերը, Ռուսսոն, Հելվեցիուսը և ուրիշներ:

Մոնտենյան քաղաքակրթական արժեհամակարգի մեջ ուրույն տեղ են գրավում գիտությունը, հումանիզմին, բարոյագիտությանը, մարդուն նվիրված նրա առանձնահատուկ մտորումները:

Վերածննդի դարաշրջանում պաշտոնական գաղափարախոսությունը շարունակում էր մնալ կրոնական սխոլաստիկական, սակայն հումանիզմի ձևավորումը, անտիկ փիլիսոփայության ժառանգության վերականգնումը հանգեցրին նրան, որ առաջադիմական գաղափարները դադարեցին լինել քարացած մտածողության սպասավորներ: Ամենից շուտ այս առաջադեմ գաղափարները դրսևորվեցին բարոյագիտության մեջ, «այն բանի մեջ, որ վերականգնվեցին ստոիցիզմի և էպիկուրիզմի բարոյագիտական ուսմունքները՝ ուղղվելով տիրապետող կրոնական բարոյագիտության դեմ» [3, 297]: Բարոյագիտության մեջ Մոնտենը փնտրում է «ինքնաձանաչում, նաև ձանաչում այն բանի, ինչը կարող է սովորեցնել հան-

գիստ մեռնել և հանգիստ ապրել <...>, եթե փիլիսոփայության մեջ տարվենք ավելորդություններով, այն կլինի մեր բնական ազատությունը և կշեղի բնության մատնանշած գեղեցիկ ու հարթ ճանապարհից» [1, 15]: Ըստ նրա բնությունը մարդկային կրքերի և զգացմունքների, ուրախությունների ու վայելքների աղբյուրն է, որովհետև մարդը բնության մասնիկն է, «և բնության բոլոր ուժերի խաղը արժանի է նրա վստահությանը» [5, 26]: Մոնտենը համոզված է, որ մարդը բնության զարդն է, և անհիմն է կարծել, թե բնության շահագործումն ավելի խրախուսելի է, քան դաշնությունը նրա հետ:

Քանի որ նրա բարոյագիտության տեսության ելակետը սկեպտիցիզմն է, ուստի մարդը ևս իրավունք ունի կասկածելու: Մոնտենը խորհրդածում է փառքի, հարստության, առողջության, մահվան, ինչպես նաև բանականության հնարավորությունների մասին: Նա ցանկանում էր, որ բանականության միջոցով ճշմարիտ ճանապարհի վրա դրվեն մարդու գործունեությունը, նրա գործերն ու արարքները: Բանականության նպատակը ամեն ինչի նկատմամբ սպառիչ պատասխան ստանալն է: Նման բարոյական բովանդակություն ունեցող հարցերի վերջնական նպատակը օբյեկտիվ ճշմարտության հասնելն է. «Չէ որ միտքը անհատական է, և նրան հասանելի է երևույթների չափազանց անելան մի ծվեն, որով անկարելի է հավաստի դատել ամբողջ աշխարհի մասին: Ինքնասիրությունն ու շահախնդրությունը, փառատենչական նկրտումները և երկյուղի զգացումը բանական արարածին հեշտությամբ շեղում են օբյեկտիվ ճշմարտության որոնման ուղուց» [2, 87]: Մոնտենը բարոյագիտությունը ներկայացնում է իբրև արգասիք կյանքի մասին ազատ ու անկաշկանդ խոհերի: Ինչպես աշխարհի մասին իր պատկերացումներում, այնպես էլ բարոյագիտական մտազննումներում Մոնտենը մարգարեի դեր չի ստանձնում: Վերոնշյալ գաղափարների բովանդակության մեկնաբանմամբ նա ուղղակի մի կողմ է դնում ժամանակի շունչը՝ պարուրված սխուլաստիկայով, և գնահատում է այն արժեքավորը, ինչը ընկած է անստիկ փիլիսոփայության արժեհամակարգի մեջ:

Մոնտենը յուրովի է պատկերացնում առաքինությունը՝ որպես բարոյագիտական կատեգորիա: Առողջ դատողության դիրքերից նա օրինակներ է բերում ապացուցելու համար, որ լավ է ազնիվ ապրել, քան լինել ստահակ, որ խնայողությունը գերադասելի է ազահությունից, որ հաճույքների ու վայելքների մեջ չափավորությունը նախընտրելի է շվայտությունից, որ շատ ավելի հաճելի է սեր ներշնչել, քան ատելություն ու սարսափ: Ըստ նրա՝ աշխարհում չարն ավելի շատ է, քան բարին, որովհետև մարդն իր հեղհեղուկ բնությամբ հեշտորեն է տրվում կրքերին ու անմարդկային արատներին: Հենց այս բացասական հատկանիշներն են, որ արժեզրկում են բարությունն ու ազնվությունը: Նրա տեսադաշտից չեն վրիպում այն բացասականն ու անընդունելին, ինչը խարխլում է մարդկային բարոյականության հիմքերն ու ներդաշնակությունը. «Ես գարշանք եմ զգում, երբ մարդիկ երիցս խաչակնքում են աղոթքի ժամանակ, իսկ օրվա մնացած ժամերին հմտանում են ատելության, ազահության, անարդարության մեջ...» [2, 389]: Որպես բարոյագետ, նա սուտը, կեղծիքը, խաբեբայությունը, վախկոտությունը և այլ բացասական դրսևորումների հակադրում է ազնվությունը, բարիությունը, ճշմար-

տությունը և մարդկային առաքինությունների մի ամբողջություն, որն արտահայտվում է նրա գործերի գրեթե բոլոր բաժիններում: Ինքն էլ կոչ է անում ստեղծել այնպիսի միջավայր. «որտեղ ունեցվածքի կառավարման կամ բազմապատկման հոգսը չի կտրում նրան իր բնավորությանն ու կերտվածքին ավելի հարմար, ավելի հանգիստ ու հաճելի զբաղմունքից: Եվ ունևորությունը, և չունևորությունը կախված են այն պատկերացումներից, որ մենք ունենք դրանց մասին... Հարստությունը, փառքն ու առողջությունը գեղեցիկ ու հրապուրիչ է այնքանով միայն, որքանով այսպիսին է դիտվում ունեցողների կողմից» [2, 103]:

Բոլոր հումանիստներից առաջինը Մոնտենը սկսեց մտորել մարդկային բանականության անկատարության մասին, և որպես ապացույց՝ բերում է աշխարհի անկատարելիությունը: «Օիժաղելի չէ,– գրում է Մոնտենը,– այդ խեղճ ու զագրելի արարածը, որը ընդունակ չէ նույնիսկ կառավարել ինքն իրեն ցանկացած պատահականությունից, հայտարարում է իրեն Տիեզերքի տիրակալ ու իշխող, որի փոքրագույն մասնիկն անգամ չի կարող ճանաչել» [4, 389]: Խոսելով մշակութաբանական արժեքների ընկալման մոնտենյան հայացքների մասին՝ կարևոր է նկատել, որ այն շատ դեպքերում համապատասխանում է մշակույթի այն ըմբռնման հետ, որը ընկած է անտիկ մտածողների գաղափարներում:

Մարդը, ըստ «Փորձերի» հեղինակի, հասնում է մշակույթային ձեռքբերումների այն ժամանակ, երբ իր բոլոր մտքերը ուղղում է հոգու, մարմնի, կամքի, էսթետիկական ճաշակի և իր բանականության կատարելագործմանը: Նման մշակույթային արժեքների առավելությունները Մոնտենը տեսնում է հասարակական հարաբերությունների, բարոյական նորմերի նախնական տիրապետման, իրականության էսթետիկ ընկալման մեջ: Մարդկանց մշակույթը, ըստ Մոնտենի, որքան բարձր է, այնքան նրանք ավելի հավատարիմ են բնությանը և հետևում են նրա ցուցումներին. «ոչ թե սովորեցնել բնությանը, սովորել բնությունից,– ահա ճանապարհը դեպի իրական մշակույթը» [1, 9]:

Գոյություն ունի մշակույթի ընկալման ևս մեկ մոնտենյան մեկնաբանություն: Նա հաճախ նկատում է, որ մշակույթը մարդկային հանճարի բարձրագույն նվաճումն է, որպիսին նա ճանաչում էր վաղ շրջանի հունական և հռոմեական մշակույթները: Իսկ անտիկ մշակույթը նա գնահատում է նրա համար, որ այդ մշակույթի մեջ նպատակասլաց ձևով ընկած է մարդու դաստիարակությունը՝ զարգացած ինքնագիտակցությամբ և առավելագույն բարոյականությամբ: Այս հիմքի վրա Մոնտենը հակադրվում է առկա հասարակությանը, որի քաղաքացիները գտնվում են առավել ցածր մակարդակի վրա, քան Աթենքի ազատախոս բնակչությունն էր:

Ավելորդ չէ նշել, որ «Փորձերի» հիմքում ընկած է մշակույթի պատմության մարդասիրական գաղափարի բարոյական սկզբունքը, որտեղ անտիկ իմաստասիրությունը մերժում էր քրիստոնեական ասկետիզմը և հակամարդկային օրենքները:

Մոնտենի գիտակրթական հայացքների հարցի շուրջ

Վերածննդի դարաշրջանի գիտաբանական համակարգերի մեջ անչափ կարևոր են Մոնտենի գործերում ներկայացված իրավաքաղաքական, բարոյական, իմաստասիրական, մշակույթային, կրթագիտական գաղափարները:

Մոնտենի գիտակրթական մտայնության հիմնական խնդիրը միայն կրոնական և միջնադարյան դոգմատիկ մտածողության քննադատությունը չէր, այլ փոխել կրթության և գիտության ոլորտում առկա ուսուցման գիտամեթոդական համակարգի բովանդակությունը, նրան տալ նոր իմաստ և նշանակություն, ինչը պետք է հասցներ առողջ և առաջադիմական հարաբերությունների ձևավորմանը Ֆրանսիայում:

Իր «Փորձերում» Մոնտենը, արմատական քննադատության ենթարկելով սխոլաստիկ կրթությունը, այն համարելով մակերեսային և դատարկ, կարևորում է գիտության և կրթության դերը աշխարհի և բնության ճանաչողության մեջ, մարդու գործերում և արարքներում: Նա սասանում է քրիստոնեական գաղափարախոսության քարացած մոտեցումները՝ դրանց հեղինակներին անվանելով «գրքերով բեռնված ավանակներ» և «կիկերոնականություն», որոնց մոտ գիտությունը լռում է ուղեղի մակերեսի վրա» [2, 168]: Մոնտենը կողմնակից է գիտելիքների գիտակցական յուրացմանը, սաների ինքնագործունեությանը, նրանց մեջ հարցասիրության և իրենց գիտելիքները նպատակային կիրառելու կարողության զարգացմանը: Բերելով Սենեկայի խոսքերը՝ երբ հարցի էությունը նախապես կշռադատված է, բառերը գալիս են ինքնաբերաբար, Մոնտենը առաջարկում է. «Երբ հարցի էությունը լցնում է հոգիդ, բառերն ուղեկցում են նրան» [2, 202]՝ հիշելով լատինական ասացվածքը:

Մոնտենի գիտակրթական հայացքներում տեղ են գտել նաև ուսուցչին և աշակերտին ուղղված խրատներ, առանձին գիտությունների և առարկաների ուսումնասիրման անհրաժեշտություն, սովորողների ինքնուրույն մտածողությանը հասցեագրված դատողություններ, սաների դաստիարակությանը և մի շարք առաքինություններ ունենալուն ուղղված մտորումներ: Նա գտնում է, որ գիտության խնդիրը ոչ թե այս կամ այն առարկայի մեջ հմտանալն է և ամբողջական պատկերացում կազմելը, այլ կիրթ և լուսավորյալ մարդ դառնալը: Այս կարևոր գործում նա տեսնում է դաստիարակի ինչպիսին լինելու կարևորությունը, ով գործ ունի բազում աշակերտների հետ, որոնք ունեն տարբեր ընդունակություններ և որոնց դասավանդում է նույն նյութը, բայց և միաժամանակ պահանջում պարկեշտ վարք ու վարվեցողություն. «Թող ուսուցիչը երեխայից պահանջի ոչ միայն սերտած դասի բառերը, այլև դրա իմաստն ու բուն էությունը, և իր տված օգուտի մասին դատի ոչ թե ըստ սանի հիշողության ցուցանիշների, այլ ըստ նրա կյանքի» [5, 177]:

Մոնտենը պատվիրում է իր սաներին, որ նրանք կուրորեն չհետևեն հեղինակություններին, նրանց խորհուրդ է տալիս դուրս գալ հեղինակությունների խնամակալության տակից, որպեսզի ձեռք բերած գիտելիքները դառնան նրանց սեփականությունը. «Թող ուսուցիչն աշակերտին ստիպի, այսպես ասաց, մաղով անցկացնել այն ամենը, ինչ ինքը մատուցում է, և թող ոչինչ գոռով չմտցնի նրա գլուխը, հենվելով իր հեղինակության և ազդեցության վրա, թող Արիստոտելի սկզբունքները չդառնան նրա դասավանդման անփոփոխ հիմքերը, ինչպես չեն դառնում ստոիկյանների և էպիկուրականների սկզբունքները: Թող ուսուցիչը բացատրի, թե ինչով են տարբերվում իրարից այդ ուսմունքները, իսկ աշակերտը,

Եթե ուժերը ներեն, թող ինքնուրույն ընտրություն կատարի կամ, ծայրահեղ դեպքում, մնա տարակուսանքի մեջ: Միայն հիմարները կարող են անդրդվելի մնալ իրենց համոզվածության մեջ: <...> Ով ստրկաբար հետևում է ուրիշին, նա չի հետևում ոչ մի բանի: Նա ոչինչ չի գտնում» [2, 178]:

Որպեսզի սանը կարողանա առողջ դատողություններ անել, զբաղվել ճարտասանությամբ, կատարելագործել իր մտքերը, տեսնել և ընկալել բնության երևույթները իր բոլոր հատկանիշներով, ճանաչել տիեզերքը, անհրաժեշտ է, որ ուսուցիչը նրան սովորեցնի, թե ո՞րն է իմացության նպատակը, ի՞նչ է քաջությունը, արդարամտությունը, ո՞րն է սանձարձակության ու ազատության, ստրկության և հնազանդության տարբերությունը, սովորեցնել ճանաչել ինքն իրեն, անցնել ազատ արվեստների միջով, ինչպես օգտվել կյանքից: Մինչ ուսուցիչը կբացատրի իր սանին, թե իր կյանքում ինչ է պետք ավելի խելամիտ դառնալու համար, նա պետք է ծանոթանա տրամաբանության, ֆիզիկայի, երկրաչափության ու ճարտասանության հիմունքներին: Խոսելով պատմության մասին՝ Մոնտենը նկատում է, որ պատմությունն ուսումնասիրելու ժամանակ կարևոր է շեշտադրել ոչ թե իրադարձության տարեթիվը կամ փաստերը, այլ իրադարձությունների և փաստերի մասին դատողություն անելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողությունը: Իսկ փիլիսոփայության մասին խոսելիս նա ասում է. «Իմաստության տարբերիչ հատկանիշը կյանքը մշտապես ուրախ ընկալելն է, նրան, ինչպես նաև վերլուսնյա աշխարհի ամեն ինչին, բնորոշ է հավերժ ամար պայծառությունը» [2, 191]:

Ըստ Մոնտենի՝ ուսուցիչը պարտավոր է սանի գործողությունները կառուցել ոչ միայն կրթվածության շրջանակներում, այլև բարոյականության ամբողջական դրսևորումներով. «Արիստոտելն իր մեծ աշակերտին ուսուցանում էր ոչ այնքան հետևաբանություններ կազմելու խորիմաստություններն ու երկրաչափության հիմունքները, որքան ձգտում էր սովորեցնել քաջության, համարձակության, մեծահոգության, ժուժկալության և անվեհեր ինքնավստահության բարի կանոնները, այս հանդերձանքով նա իր տակավին երեխա սանին ուղարկեց նվաճելու աշխարհը» [2, 194]:

Մոնտենը քննադատում է այն դաստիարակներին, ովքեր իրենց սաներին պարտադրում են աշխատել օրական տասնչորս կամ տասնհինգ ժամ, հնարավորություն չեն տալիս ինքնուրույն մտածել, ստիպում են կրկնել իրենց տված հանձնարարությունը: Ուսուցիչը պարտավոր է չկաշկանդել իր աշակերտներին՝ արտահայտվելու իրենց հնարավորություններին և ընդունակություններին համապատասխան, պարտավոր է ուղի ցույց տալ իր սանին, բայց երբեմն էլ պետք է թողնի, որ աշակերտները ինքնուրույն գտնեն այդ ուղին:

Մոնտենը գտնում է, որ ուսուցումը պետք է իրականացվի ինչպես խիստ, այնպես էլ մեղմ ու հանդարտ ընթացքի մեջ, որ դաստիարակության գործընթացը աշակերտի համար չպետք է դառնա տանջալի գործընթաց, որ դպրոցները չպետք է վերածվեն բանտերի, որ աշակերտների կրթությունը հնարավոր չէ ճիպտների ու բռնությունների տարաբնույթ մեթոդներով, որ կեղծ ու կործանարար միջոցներով հնարավոր չէ սեր արթնացնել երեխաների մեջ գիտության նկատմամբ:

«Ամենագլխավորը գիտության նկատմամբ ճաշակ և սեր ներարկելն է, այլապես մենք կդաստիարակենք պարզապես գրքային խորիմաստությամբ բեռնված ավանակներ: Ճիպտի հարվածներով խրախուսելով, նրանց պահ ենք տալիս տարբեր գիտելիքներով լի տուպրակը, սակայն որպեսզի դրանք լինեն իսկական բարիք, բավական չէ պահել մոտները, հարկ է համակվել դրանցով» [1, 212-213]:

Այսպիսով՝ որպես իր դարաշրջանի առաջադեմ մտածող, Մոնտենը գիտության և կրթության առողջ գաղափարների համար ճանապարհ է հարթում՝ հիմք ընդունելով ոչ թե աստվածաբանական երկասիրությունները, այլ իրական կենսափորձը, գիտափորձերը և հետազոտությունները: Քննադատելով միջնադարյան սուրբ գրքերի մետաֆիզիկական բովանդակությունը՝ նա կանգնում է մարդկային գիտակցության ազատության և անկաշկանդ դատողության և առողջ ինքնագնահատման դիրքերում:

Եզրակացություն

Մ. Մոնտենի գործերում ներկայացված իրավաքաղաքական, իմաստասիրական, բարոյական, կրթադաստիարակչական գաղափարներն ընդունված է դիտարկել որպես Վերածննդի դարաշրջանի քաղաքակրթական և պատմամշակութային տեսության մասնակի վերլուծություն և փայլուն մտքերի արտացոլում: Սակայն, մյուս կողմից, ժամանակակիցները և լուսավորչական մտքի մեծերը նրան համարում էին նոր ժամանակների իմաստուն մտածողներից մեկը, որի թողած ժառանգությունը մեծագույն ազդեցություն է թողել հետագա հարյուրամյակների քննադատական մտքի վրա: Մ. Գորկիին գուր չէր պնդում, որ «Մոնտենը դարերի միջով սեղմում է Վոլտերի ձեռքը»:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-118>

Գրականություն

1. Գուլիգա Ա., Պաժիտնով Լ., Արժանավայել ապրելու արվեստի մասին, Երևան, Արևիկ, 1989, 288 էջ:
2. Մոնտեն Մ., Փորձեր, գիրք 1, Երևան, Հայաստան, 1991, 446 էջ:
3. Փիլիսոփայական բառարան, Երևան, Հայաստան, 1975, 487 էջ:
4. Момджян Х. Н. Французское просвещение 18-го века, Ереван, Мысль, 1983, 445 стр.
5. Шедрик А. И. Теория культуры. Учебное пособие для вузов. Москва, Юнити-Дана единство, 2002, 519 стр.

Про вопрос философского наследия Мишеля Монтеня (по первому тому «Опытов» М. Монтеня)

Рудик Варданян

Резюме

Ключевые слова: *Возрождение, Герцен, теория культуры, скептицизм, античная философия, древний мир, европоцентризм, этика*

Политико-юридические, смысловые, нравственные и просветительские идеи, представленные в творчестве М. Монтеня, воспринимаются как частичный анализ Возрождения и отражения гениальных мыслей. Однако, с другой стороны, современники и великие просветители считали Монтеня одним из мудрых мыслителей нового времени, наследие которого оказало большое влияние на критическое мышление последующих столетий. Недаром М. Горький утверждал, что «Монтень через века пожимает руку Вольтеру». Монтень начал работу над «Опытами» в 1570 году. В основу этого труда легли пометки на полях, которые Монтень делал в книгах ряда античных писателей с 1564 года. Первое издание «Опытов» в двух томах вышло в 1580 году в Бордо, второе, исправленное и дополненное, – в 1582 году. После смерти писателя Мари де Гурне подготовила в 1595 году третье издание. «Опыты» оказали огромное влияние на европейскую культуру. По словам одного из исследователей, «Шекспир полон реминисценций из Монтеня, Паскаль и Декарт спорили с ним, Вольтер его защищал; о нём писали, на него ссылались полемически или одобрительно Бэкон, Гассенди, Мальбранш, Боссюэ, Бейль, Монтескье, Дидро, Руссо, Ламетри, Пушкин, Герцен, Толстой».

On the Issue of the Philosophical Heritage of Michel Montaigne (Based on the First Volume of M. Montaigne's "Essays")

Rudik Vardanyan

Summary

Key words: *Renaissance, Herzen, theory of culture, skepticism, ancient philosophy, ancient world, Eurocentrism, ethics*

The political-legal, meaningful, moral and educational ideas presented in the works of M. Montaigne are perceived as a partial analysis of the Renaissance and a reflection of brilliant thoughts. However, on the other hand, contemporaries and great educators considered Montaigne one of the wise thinkers of the new era, whose legacy had a great influence on the critical thinking of subsequent centuries. It is not without reason that M. Gorky claimed that “Montaigne shakes hands with Voltaire through the centuries.” Montaigne began work on the Essays in 1570. The work was based on the marginal notes Montaigne had made in the books of a number of ancient writers since 1564. The first edition of the Essays was published in two volumes in 1580 in Bordeaux, the second – corrected and supplemented, in 1582. After the writer's death, Marie de Gournay prepared the third edition in 1595. The Essays had a huge influence on European culture. According to the words of one of the researchers, “Shakespeare is full of reminiscences from Montaigne; Pascal and Descartes argued with him, Voltaire defended him; Bacon, Gassendi, Malebranche, Bossuet, Bayle, Montesquieu, Diderot, Rousseau, La Mettrie, Pushkin, Herzen, Tolstoy wrote about him and referred to him polemically or approvingly.”

Ներկայացվել է 14.12.2023 թ.

Գրախոսվել է 12.09.2024 թ.

Ընդունվել է տպագրության 28.11.2024 թ.